№ 24 ԹԷՀՐԱՆ ԿԻՒՐԱԿԻ ՅՈՒԼԻՍ 28 — 1896 — ԹԷՀՐԱՆ ԿԻՒՐԱԿԻ ՅՈՒԼԻՍ 28 № 24

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն Կիւրակի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղրն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ Թեհ... A

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի Կիրակի եւ տօն օրերը:

Յայտարարութիւն ընդունվում է ամենից յետոյ. խմբագրանքից ... 1 շահի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կղերը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.---Նամակ խմբագրութեան. Նամակ Դավրէժից. Նամակներ Համադանից. Պետնքի պատկերներ. Նամակ Եգիպտոսից. Նամակ Սպահանից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր. Քաղաքական տեսութիւն. ՖԷԼԻԵՏՕՆ Մի գիշեր քաղուածք Պօլսոյ, ընտանեկան կեանքից. Յայտարարութիւններ.

## ԿՂԵՐԸ

----

Եսայի եպիսկոպոսի Հրաժարականը, որով նա ազատում է Պարսկաստանի եւ Հնդկաստանի թեմն իր քահանայական իշխանութիւնից առիթ է տալիս մեզ կրկին վերադառնալու այն կնճռալից հարցին, որը թէեւ շատ անգամ եւ շատերից քննութեան առնուած ու ուսումնասիրուած է եւ սակայն մինչեւ ցարդ մնում է դեռ եւս անլուծանելի...

Ինչ է կղերն, որ իր տիրութեամբ տիրած է եւ կամայականութեամբ ուզում է տիրել թէ ազգի եւ թէ գիտուն ժողովրդականութեան վրայ Աստուածային մի երեւակայական հրովար տալով:

Աշխարհիս սկզբից. որքան պատմութիւնը մեզ հաւաստում են, մինչեւ այժմ. թէ' կռապաշտութիւնն, թէ' Զրադաշտութիւնն, թէ' Պուտայականութիւնն, թէ' Մովսիսականութիւնն. թէ Քրիստոնէութիւնն եւ թէ Մահմետականութիւնն մեզ միշտ ցոյց են տուել տգէտ եւ խաւարամիտ մի հոգեւորականութեան քմահաճոյքն, որից մինչեւ ցարդ փրկութիւն չենք ունեցած:

Եւ այսու ամենայնիւ անտարբերութեամբ կրել ենք եւ կրում ենք դեռ հոգեւորականութեան մեր ուսերի վրայ բեռնած բռնակալ զաւազանը:

Ինչ է սորա զաղտնիքը.....:

Հոգեւորականութիւնն ինքն ըստ ինքեան շատ վեհ եւ աստուածային մի կոչումն է. հասարակ ժողովուրդն զգում է նրա բարձրութիւնն եւ ծնրադրում է նրա սրբութեան առջեւ եւ այդ իրողութիւնն իսկ թեթեւամիտ եւ ամբիծ տիրացուների փառասիրական ծրագիրներին եւ անյայտ կրքերին նիւթ տալով լցնում է հրապարակն Աստուածային բանին անարժան եւ կեղծ քարոզիչներով:

Եւ ռամիկ ժողովուրդն նրանց մէջ կարծելով տեսնել ճշմարիտ եկեղեցականին ղեկար յանձնում է իր բարոյական կեանքն ու խիղճն այդ թեթեւաբարոյ ու փոփոխամիտ անձնաւորութեանց հոգեւորական կեղծ ոգեմին, որն մի կեղտոտ շալի նման վաղն չէ խղճահարելու դէն ձգել, եթէ իրենց անձնական նպատակին չը յաջողին հանիլ:

Ինչ է կղերն ասացինք, եւ կրկնում ենք. ինչ են այդ սեւահագի սեւազգեստներն, որոնք ամեն տեղ գլուխն են կայնած եւ որոնց անցեալն ամենայն ինչ խոստովանում է նրանց առջեւ.....

Ով են դրանք, որոնք անպատիժ գործում են այն, ինչ որ վնասակար է, ինչ որ անպատիւ է. եւ հակերին պատուհաս մարախների նման այսօր այստեղ են. հնձելով, ապրելով, խեղճ ժողովրդի արիւն քրտինքի արդիւնքով իրենց փորը ուռեցնելու եւ մարմինը պարարտացնելու համար.....եւ վաղը... երբ այստեղ ամենայն ինչ վերջացած է, եսայու նման ոտքով բերանը մաքրելով թռչում են դէպի մի ուրիշ աւելի պարարտ, մի աւելի հարուստ տեղ իրենց կոտեից աւեր ու անէծք միայն թողնելով:

Ովքեր են դրանք.....

Մեր յաջորդ յօդուածով պիտի փորձենք ~~մի քիչ~~ ... կղերի վրայ բաշխած սեւ վարագոյրի մի անկիւնը եւ ցոյց տալու դրանց ինչ տեսակ անպաններ լինելը:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

----

Թէհրան 21 Յուլիս 96

Շաբաթի վերջին 22-րդ համարը պատահմամբ ձեռքս անցած լինելով կարդացի նրա մէջ ի միջի այլոց Աստղ-Արեւելեանի եւ նրա կարծեցեալ ծառայութեան թագման հանդիսի մասին գրուած անտրամաբանական յօդուածը:

Շաբաթի մէջ ընկած այդ արտադրութիւնն ինձ զարմանք չ'պատճառեց:

Շաբաթն վաղուց արդէն կասկածների հանդիսարան է դարձել եւ հանդոյն այնտեղ է փռում իր կասկածին դէմքն ու խեղկատակութիւնքն հանդիսատեսներին ցոյց տալու եւ նրանց զուարճացնելու համար:

Կասկածներն ի բնէ անտի նմանելու մէջ էլ շատ ճարպիկ են, այնպէս որ Շաբաթի հանդիսարանի մէջ ժողովուելով խեղճ խեղճի տալուց յետոյ Աստղ-Արեւելեանի արտօնատէր Մակար Մակարեանի ստորագրութիւնն էլ գողութեամբ նմանեցրել եւ իրենց բնութեան յարմար մի յայտարարութեան տակ դնելով իրենց հանդիսարանի մէջ են զետեղել:

Այս կեղծիքներն ոչինչ կարող ենք ասել: Կասկած են.... իրենց բնութիւնն է այդ, միայն ափսոսում ենք որ չափազանց լիրբ են այդ կասկածները:

Ամատունի.

### ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

----

11 Յուլիսի 96

Ամսոյս 5-ին պաշտօնական յայտարարութիւններ փակցուեցան պատերին, որոնք ծանուցանում էին ... որ ... տէրութեան մարդկանցից բացի ոչ ոք իրաւունք չունի հրացաններ պահելու իր մօտ: Ով ունի հրացան, պէտք է մինչեւ 10 օրուայ մէջ յանձնէ կառավարութեան եւ արժէքն ստանայ. իսկ զօրանից դէնը ում մօտ որ գտնի կը գրաւէ յօրքանիր.

Թիւրք հոգեւորական դասը սաստիկ հակառակ է զորան. մինչեւ այսօր չէ գտնուել մէկը, որ յանձնէ այդ հրամանը: Ասում են նամակով գրած լինել արդէն որ Ղոյոյի եւ Ալբանի զօրքերը միացել են, որով հոգեւորականութիւնն էլ միացած խնդրագիր ուղարկեց Մ. Լուսինեանին Վ. Հայրապետեանին խնդրելով որ կամ Միւրզա եպիսկոպոսին վերադարձնէ թէ ձեր կառավարութեան եւ կամ Յովհաննէս, Բարդուղիմէոս ու Յովհաննէս վարդապետներից մէկին ու մէկին եպիսկոպոսացնելով ուղարկէ:

Ա. Ց.

### ՆԱՄԱԿ ՀԱՄԱԴԱՆԻՑ

----

24 Յուլիս 96

Պարոն Խմբագիր

Աստղի № 22 համարում լոյս տեսած ձեր երկրորդ նամակը շատ հետաքրքրական էր, հակառակ սորանց ... ինչ էք քօղարկում, զուցէ մտածում էք որ եթէ ձեր իսկական անունը յայտնուի, ձեր տանտէրերն, լինին նոյն ... անուանք յառաջանալու ... չեն գիտեն.

Եթէ առաջին նամակով ձեր նպատակն էր ... թիւրքական լրագրերու-

